## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ

*Ս. Էջմիածին*

Վեհափառ Տեր,

ԼՂՀ կառավարության և անձամբ մեր անունից ի սրտե շնորհավորում ենք Ձեզ Ամենայն Հայոց Հովվապետ ձեռնադրվելու և օծվելու կապակցությամբ:

Հավատացած ենք, որ Դուք, բազմելով Գրիգոր Լուսավորչի գահին իբրև Հայոց նորընտիր Կաթողիկոս, ի դեմս Հայ Առաքելական Եկեղեցու՝ Ձեր հոգևոր առաքելությունն ու հայրապետական օրհնանքը կբերեք մեր ժողովրդին, Աստծու կողմից Ձեզ ընձայված շնորհներն ի սպաս կդնեք Հայոց պետականության ամրապնդմանը: Կանեք առավելագույնը երկրի համար շրջադարձային այս դժվարին ժամանակներում՝ իշխանություններին սատարելու, ազգաշեն գործունեությամբ համայն հայության ուժերը համախմբելու, ազգովի ապաշխարելու, ինքնամաքրվելու և մեր հավատքը զորացնելու համար:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, ամենայն բարիք:

Որդիական սիրով՝

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ